Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Հայաստանի պատմություն» (6 դասաժամ), «Համաշխարհային պատմություն» (4 դասաժամ), «Մաթեմատիկա» (22 դասաժամ), « Մայրենի » (6 դասաժամ), «Քիմիա» (8 դասաժամ), «Ռուսաց լեզու» (11 դասաժամ),«Անգլերեն» (8 դասաժամ),«ԹԳՀԳ» (12 դասաժամ),«Հայոց լեզու» (2 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. **օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. սեպտեմբերի 9 -ին՝ ժամը 12:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Շողակաթ , 10-րդ փող. , շ. 1/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 28-74-77 հեռախոսահամարով: